

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻԻ «ԴԱՍԱԿԱՆ» ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ Ա ԳՐՔԻ 5-ՐԴ ԳԼՈՒԽԻՆ ՄԵՋ

ՋՈՒՍՏՈ ՏՐԱՅԻՆԱ (Հոսմ)

1. Արևմտյան դիտական ավանդության մեջ, Խորենացիի «Պատմություն Հայոցը» գրեթե անծանոթ է դասական պատմադեմոստիկոս և բանասերներու Մյուս կողմի նույնինքն հայագիտության կալվածին մեջ, արևմտյան մասնագետները Պատմահոր գործը կասկածով նկատած են: Այս կասկածը հասկանալի է, գոնե որոշ չափով: Իրապես Խորենացիի պատմական աշխատությունը գիտնականներու կներկայացվի, որպես անսովոր բնագիր մը:

Այս անսովորության պատճառները պետք է անհապաղ քննենք: Նախ, Խորենացին միակ հայ պատմիչը եղած է, որ լրիվ ու ամբողջական աշխատություն մը շարադրած է իր ժողովուրդի հնագույն պատմության մասին: Նաև Խորենացիի գործը շատ կտարբերի հայ և արևելյան քրիստոնեական պատմագրության մյուս «կանոնական» տիպերեն, որովհետև շատ հունական աղբյուրներ օգտագործած է, ոչ միայն պատմական նյութը ճոխացնելու համար, այլև որպեսզի նույնինքն գրքի շարադրությանը ներշնչում որոներ և հելլենիստական ոճով հայոց պատմություն մը ձևեր:

Այս պատճառներով, Խորենացիի «Հայոց պատմության» ուսումնասիրությունը բազմաթիվ դժվարություններ ունի: Ըթե ոչ ոք պիտի ժխտե անոր կարևորությունը ինչպես պատմական աղբյուր, ավելի խնդրական է, անտարակույս, ցույց տալ՝ թե իր ներքին բնույթ տարօրինակ չէ V դարու Հայաստանին համար: Այսպես, Կարրիերի հետքերուն հետևելով, հմուտ դիտնականներ ինչպես Թումանով և Թոմսոն, իրենց հեղինակությամբ արևմտյան հայագիտության վրա խորապես ազդեցին, ճշտելու համար՝ թե արդարև Հայոց Պատմահայրը միջնադարյան խարդախ ու խաբբա մըն էր:

Խորենացիի բնագրին մեջ, զոր այժմ ունինք, իսկապես քանի մը ժամանակավորականներ կնկատվին, բայց անոնց քննութենեն կհետևի՝ թե ատոնք կրնան ըլլալ քիչ թե շատ հաջորդական մեկնաբանություններ կամ ձեռնմխություններ: Այսուհանդերձ Թումանով, և ավելի լայնորեն Թոմսոն, խորհեցան թե ամբողջ բնագիրը գրված էր ավելի ուշ քան V դարը: Բնականաբար, այդ քննադատական դիրքը Պատմահոր դեմ չէր կրնար ծագիլ միայն ինչ-ինչ ժամանակավորականներու պատճառով. արդարև ասոնք օգտագործված են իբր շոշափելի փաստեր ավելի բարդ մեկնաբանության մը համար:

Իրապես, ամբողջ «Պատմություն Հայոցը» կասկածելի բնագիր մը պիտի մնա, եթե սահմանափակվինք նկատելու միայն Հայաստանի պատմական դիրքը, զայն չհամեմատելով Բյուզանդիոնի դիրքին հետ: Արդարև զբժվար է դնել գաղափարաբանական հարաբերություններ Խորենացիի և հայկական V դարու ուրիշ պատմիչներու միջև, որովհետև իր մշակույթը կերևի «դասական», այսինքն ազդված՝ Արևմուտքեն: Խորենացիի պատմական նյութը չի պատկանիր ամբողջությամբ եկեղեցական պատմագրության, և իր գաղափարաբանությունը կցուցանե քաղաքական դիրք մը, որ չի նմանիր ժամանակակից պատմաբաններուն մտածելակերպին:

<sup>1</sup> R. W. Thomson. Moses Khorenats'i. History of the Armenians. Cambridge (Mass.), 1978.

Հատորի մը մեջ, որ Վենետիկ լույս տեսավ, քանի մը լուսաբանություններ կատարած եմ ճշտելու համար թե Խորենացիի «Պատմություն Հայոցը» իսկապես V դարու բնագիրը մը կրնա ըլլալ<sup>2</sup>, Բայց ճիշտ է մտաբերել թե Խորենացիի գործին նկատմամբ դատաստանները մեծ մասամբ ենթադրության սահմանին մեջ կմնան: Վերջնականորեն ոչինչ կրնանք բանաձևել, որովհետև դեռ չունինք կատարյալ պատմաբանասիրական մեկնաբանություն մը այս նշանավոր, բայց խնդրական աշխատության մասին:

Այս պակասությունը կախում չունի բանասիրական խնդիրներ, որովհետև Թիֆլիս տպագրված հրատարակությունը բավական գոհացուցիչ է: Սակայն, պետք է ըսել թե «Հայոց պատմության» ամբողջական մեկնաբանություն մը, դժվարին գործ մըն է, որովհետև անոր իրագործումը չի պահանջեր միայն Հայաստանի պատմության և գրականության ծանոթությունը, այլ և հելլենիստական, հռոմեական ու բյուզանդական մշակույթի<sup>3</sup>:

2. Այս հոդվածին մեջ, պիտի ջանամ բացատրել, թե ինչպես Խորենացիի պատմական մեկնությունը մը կարելի է իրագործել՝ տարրեր տեսակետներ և գիտական ավանդություններ համեմատելով: Ա գրքին 5-րդ գլուխը իբր օրինակ ընտրեցի. այս գլխի մեջ Խորենացին կհայտնե ժամանակագրությունը, որ Տիեզերական շրջեղելին հաջորդած է: Գլխուն վերնագիրը շատ կարևոր պատմագրական գաղափարով մը կսկսի՝ «Յաղագս հավասար գայն ազգաբանութեան»: Ի՞նչ կնշանակի հավասար գայն: Խորենացին չուզեր միայն համեմատել Աստվածաշունչը ու հելլենիստական ազգաբանություններ՝ այլ ան կուղէ որ անոնք հավասարին:

Խորենացին գիտե որ հունական պատմիչները հնագույն ավանդությունը ունեին՝ նախնական ազգաբանություններ վերակառուցանելու և կարգավորելու: Ան կփորձե, այդ պատմագրական գիտարվեստը իր «Հայոց պատմության» հարմարեցնել: Անոր համար, հաճախ կգործագրե կարգ գաղափարը, կարևոր գաղափար մը Խորենացիի պատմագրության, որ հունական ավանդությանը ըմբռնողութենեն կներշնչվի:

Ճշմարտության իր փնտռութիւն մեջ, Խորենացին կհամոզվի թե միակ պայմանը շարադրելու հայերու հատուկ ազգաբանություն մը՝ հույն իմաստուններու գործերուն ապավինիլ է: Անոնք արևելյան դիվանի փաստաթուղթեր ու գրքեր քաղած և թարգմանած էին, մանրամասնորեն ծանոթացնելու համար անոնց թագավորները օտար ժողովուրդներուն<sup>4</sup>:

Խորենացին կմտածե, որ հույները ավելի առարկայական են քան պարսիկները: Անոնք ոչ մեկ հետաքրքրություն ունեին փոխելու Հայաստանի մասին տեղեկությունները, և կրնային անտեսել աննշան նյութերը: Պատմահայրը հելլենիստական մշակույթի համակիր մըն է. անոր համար կփափաքի զայն հավասար նկատել արևելյան պատմագրական ավանդության: Ուստի ուրիշ հայկական պատմաբաններուն կհակադրվի, ըսելով՝ «Եկ սկսայց՝ յորոց եւ այլքն, որք յեկեղեցւոջ եւ ոչք ըստ Քրիստոսի, աւելորդ համարելով զարտաքնոցն երկրորդել յաղագս սկզբանն առասպելս» ևն (Մ. Խ. 1. 3): Ընդհակառակն Խորենացի կուզե հեթանոսական Հայաստանի ազգաբանությունները կարգավորել: Միաժամանակ գիտե որ ամենևին չկա գրե առնված հայկական ազգաբանություն մը որ հնագույն շրջաններու մասին կատարելապես պատմե:

Մակայն պետք էր օգտագործել նաև Աստվածաշունչը: Հայ գիտունները կհարգեին անոր հեղինակությունը, միաժամանակ կհիշեին ինչ որ Յվսեբիոս կըսեր իր «Քրոնիկոնի» մեջ. «Թէ ոչ յունաց եւ ոչ բարբարոսաց եւ ոչ այլոց անդատին իսկ յերբայեցւոց մարթի հաւաստեալ ուսանել զամենայն

<sup>2</sup> G. Traina. Il complesso di Trimalcione. Moses Xorenac'i e le origini della storia geografica armena. Venezia, 1991

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 93—109:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 41—88:

աշխարհի զժամանակագրութիւնն: Եվ քիչ մը հետո կ'ավելցնեն՝ «Եւ արդ՝ զինչ հարկ իցէ ինձ, որ քան զամենայն ինչ զճշմարտութիւն պատուեմ, զայնպիսի իրս մանր կրկտել, որ եւ Յերրայեցիս յիմ սիրելիսն երկբայութիւնս գտանի. զոր ի դէպ ժամանակի յանդիման կացուցից: Այդ այս ընդունայնակարծ հպարտութեան ժամանակագրացն ասասցի ի կշտամբութիւնն»:

Միևնույն Եվսեբիոս, որուն համար երբայեցիները «սիրելի» են, կհավանի որ իր ժամանակագրութիւնը մասնական մնաւ: Խորենացին ավելի հառաջ կ'մզվի. 5-րդ գլուխին սկիզբ, կապացուցնեն թե անկարելի է շարադրել Հայաստանի հնագույն պատմութիւնը, լոկ Աստվածաշնչի և Եվսեբիոսի միջոցով: Ուստի կ'ըսեն. «Մանաւանդ զի աստուածայնոյն դրոյ զիրսն ի բաց հատեալ յինքն սեպհական ազգ՝ ելիք զայլոցն իբր զարհամարհելեացն եւ իւրոց անարժան կարգելոց բանից»:

Այս խոսքին մեջ հակասութիւն մը կ'ենկատեմ, Խորենացին իր աշխատութեան մեջ հրեական ժողովուրդը ընդհանրապէս շատ լավ կարծեվորեւ իր ազգի և Բայբեկի գաղափարները, ինչպէս և կոն Զեքիայնը հայտնած է, Երրայեցի Փիլոնեն կըբողնէ, Խորենացիի հերոսները, Բագրատունի ազգի անդամները, երրայական ընտանիքն մը կ'սերին: Պատմագրի իր բնորդը Փլավիոս Հովսեփոսն է, որու երկդիմի կացութիւնը կ'ըսեն՝ հելլենիստական ու ազգային ինքնութեան միջև շարժող: Վերջապէս կ'ըսեն հրեական ժողովուրդը իբր Բայբեկի հարստահարութեան դեմ պայքարի: V դարու Հայաստանին մեջ, Մակկարայեցիներն կ'երեվելին իբրև այժմեական անձեր՝

Սակայն երրայական բնորդը բոլորովին գոհացուցիչ չէր: Խորենացի կողմ պատրաստել պատմական մշակույթ մը, որ սեփական ըլլար իր ազգին, և ոչ լոկ նույնատեսակ: Կարելի չէր միշտ գտնել հանգիստութիւն մը ընդմեջ հայերու և երրայեցիներու: Թեև աստվածաշնչական պատգամ տիեզերական պատգամ մըն է, սակայն Աստվածաշնչունը երրայեցիներուն համար գրված էր: Այնուհետև Պատմահայրը կ'ներկայացնեն իր սեփական պատմական կարգը ընտրութեամբ: Եվսեբիոս դեռ կ'ըստագովեն երրայեցիներու ճշմարտութիւնը, զոր Խորենացին չի ժխտեր, սակայն կ'միջի այդ ճշմարտութեան ամբողջականութեան մասին: Ասոր համար, 5-րդ գլուխին մեջ, Նոյի հաջորդներուն ցանկ մը կ'հաստատեն, որ Մենդոց Գրքին թեև կ'մանի, բայց զոր արդարև ի հնոց պատմութեանց կ'ըբողնէ:

3. Այս հին պատմութիւնը գրած են հռոմեական կայսրութեան երկու հույն ժամանակագիրներ, այսինքն Արյուդենոս և Կեփաղիոս: Խորենացին քանի մը անգամ մեջ զանոնք կ'մեջբերել: Բերոսոսի և Բազմավեպի հետ (Մ. Խ. 1. 4) Թոմասն կ'ամփոփեն շատերու կարծիքները այս խնդրին մասին հետևելով նախադասութեամբ՝ «Moses is not quoting these historian; directly, but from Eusebius' 'Chronicle»:

Այս փաստարկը կ'ծագի մեկ Գուտշմիդի ուսումնասիրութենէ, որ հանդիպման շատ կետեր ունեցող երկու բնագիրներուն համեմատութիւնը մը ըրած էր՝ Սակայն Ավդերյան, «Քրոնիկոնի» հրատարակիչը, եզրակացուցած էր, որ անոր թարգմանիչը, եթե չէր նույնինքն Խորենացին, գեթ իր շրջանին պետք էր պատկանիլ: Բայց ավելի մոտ համեմատութիւն մը Եվ-

<sup>5</sup> B. L. Zek'yan. L'ideologie nationale de Movses Xorenac'i et sa conception de l'histoire.

<sup>6</sup> R. W. Thomson. The Mice'ea: in Early Armenian Historiography.—Journal of Theol. Studies 26, 1975, 329—341: P. Brown. Religion and Society in the Age of Saint Augustine. London, 1972.

<sup>7</sup> R. W. Thomson. Moses Kkorenats'i, p. 70.

<sup>8</sup> A. von Gutshmid. Ueber die Glaubwürdigkeit der Armenischen Geschichte des Moses von Khoren, 1876—Kleine Schriften III. Leipzig, 1892, 281—331.

<sup>9</sup> J. B. Aucher. (Ազգերյան). Eusebii Pamphili Caesariensis Chronicon B'paratum 1—2. Venetia, 1818.

սերիոսի ու Խորենացիի միջև պիտի հայտնաբերե թե Գուտշմիդի վերոհիշյալ վարկածը ամբողջությամբ ճշգրիտ չէ:

Աբյուզենոսին սկսինք. անոր հատվածները, որ Խորենացիի բնագրին մեջ կգտնվին, ընդհանրապես Եվսեբիոսի գրության հետ կհամաձայնին: Չեմ ուղեր խոսիլ Բ գրքին 8-րդ գլուխին մասին, որ ուրիշ խնդիրներ ալ կհարույցանե, և իմ քննությունը պիտի սահմանափակվի միայն Ա գրքին: Այս գրքին 4-րդ գլուխին մեջ, «Քրոնիկոսին» նախադասություն մը վերագրված է, իսկ նիսոսի ազգաբանությունը կհամապատասխանե բառացիորեն Եվսեբիոսի համանման անցքին: Բայց Աբյուզենոսին այդ երկրորդ հիշման հետ Խորենացի Եվսեբիոսի ավանդութենեն կհեռանա Արա Գեղեցիկի ազգաբանությունը հորինելով: Այդ ազգաբանության հետ կհիշե դարձյալ Աբյուզենոսի անունը, ըսելով. «Եւ զայս մեզ Աբիւզենոս յիւրում առաջնում առանձնականի իմն մանր ազգաբանութեան ասէ, զոր աստ ուրեմն յետոյ ոմանք բարձին»:

Արդևն Գուտշմիդ կմտածեր որ Աբյուզենոսի ակնարկված անցքը Խորենացիի կողմն կեղծարարություն մը ըլլար: Արդարև, ան կտարբերի ամբողջովին այդ գլուխին, քանի որ հատուկ անունները իրենց արևելյան կերպը կսյահեն: Ասիկա կվկայե թե Աբյուզենոսի վերագրելի մեջբերումը չի կրնար ըլլալ քաղված հունական, այլ՝ հայկական աղբյուրն մը: Իրապես Արայի ազգաբանությունը, զոր Խորենացիին կուտա, կհամապատասխանե անցքի մը Սեբեոսի պատմության Ա գլխին<sup>10</sup>: Արդ, կարելի է ասկե եզրակացնել որ Խորենացիի մեջ գտնվող տվյալը Մար Աբասի ասորերեն պատմութենեն քաղված է:

Սակայն այդ փաստարկությունը ցույց կուտա նաև որ Աբյուզենոսի Ա գրքին մեջբերումը սոսկ կեղծարարություն մը չէ: Եթե այդ նախադասությունը ուշադրությամբ կարդանք, պիտի գտնենք որ Խորենացիին միայն կըսե. «Եւ զայս մեզ Աբիւզենոս... ասէ»: Ասիկա չի նշանակեր, որ Պատմահայրը՝ կմեջբերե Արայի հիշատակված ազգաբանությունը իբր բառ առ բառ վկայություն մը Աբյուզենոսին, ասոր «Մանր Ազգաբանություն» անվանված գործին: Խորենացիին պարզապես կուզե ըսել թե ալ Աբյուզենոս, հեղինակավոր Եվսեբիոսի աղբյուրը, խոսած է Արայի մասին: Ասիկա տարօրինակ բան մը չէ, քանի որ Արայի առասպելը անձանոթ չէր հույներուն:

Ուրեմն Խորենացիին այստեղ չի գործածեր Աբյուզենոսի մեկ հատվածը, այլ միայն վկայություն մը կուտա ասոր աշխատությանը մասին: Երբ կըսե՝ «զոր աստ ուրեմն յետոյ ոմանք բարձին», այս նախադասությունը չի հայիր Աբյուզենոսի ժամանակագրությանը, այլ Եվսեբիոսի «Քրոնիկոնի» բնագրին: Խորենացիին չէր կրնար մեջբերել Արայի ազգաբանությունը առանց ըսելու, որ ասոր համար հունական աղբյուր մը չուներ, ոչ միայն որովհետև Եվսեբիոս չէր հիշատակեր հայկական ազգաբանությունները, այլև որովհետև արդեն հայտարարած էր՝ որ «Իսկ զՀայաստանեայցս նախարարութիւնս, զամենեցուն զուստն եւ զզիարդն յայտնելով համառօտ և հավաստի, որպես ի յունականս ոմանս կայ ի պատմութիւնս» (Մ. Խ. 1. 1.): Ուստի ան պետք էր դեռ Աբյուզենոսի հեղինակությունը մեջբերեր, որպեսզի հակասության մեջ չիյնար: Ուրեմն կրնանք անելի լավ հասկնալ՝ թե ինչու 5-րդ գլուխը կվերջանա այսպես՝ «Եվ զտաք զայսոսիկ արդարեւ Յունաց դպրութեամբ» ևն:

Բացի ատկե, Խորենացիին կհիշատակե Աբյուզենոսի անունը, որպեսզի գինքն շամբաստանեն՝ թե աննշան ու արտառոց աղբյուրներ կօգտագործե: Չենք գիտեր ո՞ր տեղին քաղած է տեղեկությունը, ըստ որուն Աբյուզենոս կխոսեր Արայի մասին: Հայտնապես այստեղ իր աղբյուրը Եվսեբիոսը չէր: Եվ սակայն չենք կրնար ըսել թե այդ մեջբերումը կեղծ ըլլա: Կրնանք համաձայն ըլլալ թե Խորենացիի միակ աղբյուրը, Աբյուզենոսի հատվածնե-

<sup>10</sup> Պատմություն Սեբեոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Արզարյանի. Երևան, 1979, էջ 48, 15—23:

րուն համար, Եվսեբիոսն էր. սակայն կարելի է ենթադրել, որ Պատմահայրը կրնար գտած ըլլալ այս տեղեկությունը ուրիշ հունական աղբյուրի:

4. Կեփաղիովնի խնդիրը ավելի կնճռոտ էր: Գիտենք որ այս հեղինակը ապրած է Հաղորանոս կայսեր օրով, և գրած՝ իր աշխատությունները Սիկիլիո մեջ: Արյուդենոսի հակառակ, Կեփաղիովնը չէ քաղված Խորենացիի կողմից Եվսեբիոսի միջոցով: Ոմանք ուզած են ապացուցել թե Ա. գրքին 18-րդ գլուխին մեջ Շամիրամի մասին ընդունված տեղեկությունները Եվսեբիոսին առնված են: Իսկապես երկու բնագիրներու միջև նմանություն մը կա: Բայց միայն պարունակությամբ և ոչ լեզվով: Ամեն պարագայի, 5-րդ գլխին մեջ Խորենացին կհիշատակե Կեփաղիովնի մեկ հատվածը, որ Եվսեբիոսի հետ բնավ կապ չունի:

Մեջբերումը Արայի ազգաբանության կհայի, ըսելով՝ «այսոցիկ վկայն եւ Կեփաղիովն, քանզի ասէ ի միում գլխոցն այսպէս. մաւեր զամենայն ի սկզբան մեռոյ աշխատութեանս սկսաք գրել զազգաբանութիւնսն ի դիվանացն արքունի. այլ առաք հրաման ի թագաւորաց թողուլ զաննշանից եւ զվատաց արանց ի հնոցն զյիշատակն, եւ գրել միայն զգաջս եւ զիմաստունս եւ աշխարհակալս նախնիս, եւ մի յանպէտս զժամանակս մեր ծախել եւ զայլսն»:

Ըստ Գուտշմիդի այս կտորն ալ ունի կապակցություն մը Եվսեբիոսի հետ, որովհետև «Քրոնիկոնի» մեջ կըսվի՝ «յետ որոյ (այսինքն Շամիրամ—Ջ. Տ.) նինուաս առնոյր զիշխանութիւնն, զորմէ ասէ Կեփաղիոն՝ թէ ոչինչ արժանի յիշատակի գործ գործեաց» (1. 92): Եվ քիչ մը հետո, Կեփաղիովնի գրությունը ամփոփելով, Եվսեբիոս կըսե թե հաջորդական թագավորները անպատեհազմաւեր և շլշտասէր եւ կանացի բարբ ունէին (1. 93): Գուտշմիդ կմտածեիր, որ այստեղ «ganz ähnliche Stelle» մը կար<sup>11</sup>, բայց այս գիտունը հայերեն չէր կարդար, և միայն կճանչնար լատիններն թարգմանություններ: Իսկապես ոչ մեկ զուգորդություն կարելի է դնել երկու բնագիրներուն միջև: Ասով հանդերձ պարզ է, որ Խորենացի և Եվսեբիոս կճանչնային Կեփաղիովնի գործը, բայց տարբեր ճամբաներով:

Ըստ իս, Խորենացի ուղղակի չէ կարդացած Կեփաղիովնի գրությունը, սակայն տեղյակ էր անոր բովանդակության Գոմնիոսի ժամանակագրության միջոցով: Իմ վերոհիշյալ աշխատության մեջ հայտնած եմ, որ Գոմնիոս V դարու սկիզբը ապրած, եղած է Խորենացիի աղբյուրը III դարու հոգմանական ժամանակագրության համար<sup>12</sup>: Հովհաննես Մալալաս ալ կերևի գործածած ըլլա Կեփաղիովնի գրությունը, դնելով Գոմնիոսը իբր միջնորդ<sup>13</sup>: Ասիկա ցույց կուտա, որ Խորենացիի բնագիրը ավելի ուշագրությամբ եթե վերլուծել ենք, կրնանք հաստատել թե խաբեբայի և խարդախի իր վարկը պետք է անշուշտ վերատեսնել: Ասկե զատ, իմ մեկնաբանությունը Ա. գրքի 5-րդ գլխին «Հայոց պատմության» կհայտնե, որ Խորենացի չէր օգտագործած միայն Եվսեբիոսի «Քրոնիկոնը», այլ և ուրիշ հունական աղբյուրներ, ինչ որ նույնինքն Պատմահայրն ալ կըսե միևնույն գլխին վերջերը: Կեփաղիովնի պարագային, կրնանք ենթադրել, որ ասոր համար Գոմնիոսի ժամանակագրությունը աղբյուր եղած ըլլա, այսինքն V դարու բնագիր մը: Ուրեմն, կրնանք թոմսոնի համոզումը ըլլալ. երբ ան կըսէ՝ «None of Moses' references to classical authors is based on a personal reading of the original texts»<sup>14</sup>, այսուհանդերձ, չենք կոտար եզրակացնել որ Խորենացիի կողմից գրադարանը միայն հայերեն ըլլար: Ամեն պարագայի, հույն հեղինակները մեջբերելու իր եղանակը անհարիր չէ V դարու Հայաստանի և Քյուզանդիոնի մշակույթներու համար:

<sup>11</sup> A. von Gutschmid. Op. cit., S. 313.

<sup>12</sup> G. Traina, Op. cit., p. 58, 79.

<sup>13</sup> E. Jeffreys. Studies in John Malalas. Sydney, 1990.

<sup>14</sup> R. W. Thomson. Moses Khorenat'si, p. 22